ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՍՈՒՐԵՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ – ՎՐԱՍՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Գևուշ Վահանի Բաղդասարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Զոյա Աղվանի Թադևոսյան

տնտեսագիտության թեկնածու՝ Հրանտ Զավենի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2016 թ. ապրիլի 26-ին, ժամը 15^{30}-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մարտի 25-ին:

008 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Մ.Սուվարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային փորձը վկայում է, որ փոքր տնտեսություն և սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրները, ինչպիսին է նաև Հայաստանը, չեն կարող կայուն զարգացում ապահովել բացառապես ներքին պահանջարկի բավարարման հաշվին այն պարզ պատճառով, որ ներքին շուկան սահմանափակ է և երկարատև աճի հնարավորություն չի ընձեռում: Փոխարենը՝ նման երկրների և բացառապես Հայաստանի համար արտաքին շուկան և դրա պահանջարկի բավարարումը կարող են դառնալ երկարատև կայուն աճի գրավական, ուստի և Հայաստանն անկախացումից հետո վաղ, թե ուշ պետք է որդեգրեր արտահանման խթանման տնտեսական քաղաքականությունը: Սակայն, փոքր երկիր լինելուց զատ Հայաստանն ունի տնտեսական զարգացման տեսանկյունից մեկ անբարենպաստ առանձնահատկություն ևս՝ դեպի ծով ելքի բացակայություն: Իսկ քանի որ ծովային տեղափոխումն ամենաէժանն է, այն բավական կարևորություն է ստանում արտահանման խթանման ուղի ընտրած երկրի համար: Այս համատեքստում արդեն հրամայական է դառնում հարևան երկրների ծովային ելքի հնարավորությունից օգտվելու հանգամանքը:

Շրջափակված լինելով իր 4 սահմանակից երկրներից երկուսի կողմից՝ Հայաստանի համար, բնականաբար, շատ կարևոր է ակտիվ համագործակցությունը մյուս երկու հարևան երկրների՝ Իրանի և Վրաստանի հետ: 1992 թ. փետրվարին ստորագրվեցին Հայաստանի և Իրանի, իսկ նույն թվականի հուլիսին՝ Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագրերը՝ այսպիսով սկիզբ դնելով նորանկախ Հայաստանի տարածաշրջանային տնտեսական համագործակցության գործընթացներին: Տարբեր տնտեսա-քաղաքական գործոնների ազդեցության արդյունքում մինչ օրս Հայաստանը ծովային ելք ունենալու նպատակով օգտվում է վրացական նավահանգիստներից, ինչի հետևանքով էլ հայ-վրացական տնտեսական հարաբերությունների վերլուծությունը և զարգացման հեռանկարների բացահայտումը ստանում է առավել կարևորություն: Երկրների փոխշահավետ տնտեսական համագործակցության նպատակով երկրների կառավարությունների կողմից իրականացվել են բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ՝ հատկապես կարևորելով փոխադարձ հարաբերությունները դյուրինացնելուն և տնտեսական չափանիշները միմյանց համապատասխանեցնելուն ուղղված քայլերը՝ այս գործընթացում գրանցելով ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ՝ բացթողումներ: Թերևս այս տնտեսական քաղաքականությունը երկրները վարեցին մինչև 2014թ., երբ Վրաստանը ստորագրեց ԵՄ-ի հետ ասոցացման, իսկ Հայաստանը՝ ԵԱՏՄ-ին անդամակցության համաձայնագիրը: Արդյունքում, հարևան երկրները հայտնվեցին ինտեգրացիոն տարբեր կառույցների շրջանակներում, ուստի և ստիպված են լինելու այդուհետ իրականացնել ամենայն հավանականությամբ միմյանցից խիստ տարբերվող և տարբեր արժեքներ թիրախավորող տնտեսական քաղաքականություն:

Իհարկե, Հայաստանն անդամակցել է նոր ինտեգրացիոն միավորման՝ ԵԱՏՄ-ին, սակայն պետք չէ մոռանալ, որ Հայաստանն ընդհանուր սահման չունի ԵԱՏՄ անդամ-երկրներից որևէ մեկի հետ, իսկ Հայաստանը ԵԱՏՄ անդամ-երկրների հետ

կապող օղակը Վրաստանն է: Ստացվում է, որ տարբեր ինտեգրացիոն միավորումներում գտնվելով հանդերձ, Հայաստանի համար այդուհանդերձ հրամայական է հարևան Վրաստանի հետ տնտեսական կապերի բարելավումն ու հեռանկարային զարգացումը, ինչը հնարավորություն կտա մեր երկրին լավագույնս դրսևորվելու նաև ԵԱՏՄ շրջանակներում: Հետևաբար, այս համատեքստում շատ կարևոր է վերանայել մինչ օրս երկու երկրների տնտեսական հարաբերություններում արձանագրած հաջողությունները՝ դրանց առավել խորացման, և բացթողումները՝ դրանց շտկման նպատակով: Անհրաժեշտ է քննարկել Հայաստանի և Վրաստանի տնտեսական հարաբերությունների բոլոր հնարավոր զարգացումները, ինչպես նաև վեր հանել այն օգուտները, որ երկու երկրները կարող են ստանալ հետագա տնտեսական համագործակցությունից: Հայ-վրացական հարաբերությունները երկու երկրների տնտեսական համագործակցությունից զատ պարզապես հարկավոր է դիտարկել նաև երկու տարբեր ինտեգրացիոն միավորումների՝ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի հանգույցի տեսանկյունից՝ այսպիսով հայ-վրացական տնտեսական համագործակցության բարելավման խնդրի էությունն ու կարևորությունը ներտարածաշրջանայինից միջտարածաշրջանային հարթություն տեղափոխելով:

Վերոնշյալ հանգամանքները պայմանավորում և հիմնավորում են թեմայի արդիականությունն և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները*:* Հետազոտության նպատակն է հանդիսանում վերլուծել և գնահատել Հայաստանի և Վրաստանի առևտրատնտեսական հարաբերությունների վիճակը և հիմնավորել երկու երկրների միջև փոխշահավետ տնտեսական համագործակցության հեռանկարները:

Նշված նպատակն իրագործելու, ինչպես նաև վերջինիս առավել իրատեսական և գործնական նշանակություն հաղորդելու համար ատենախոսությունում առաջադրվել են ներքոնշյալ հիմնական խնդիրները.

- հիմնավորել Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության անհրաժեշտությունը՝ ներկայիս ինտեգրման համաշխարհային միտումների համատեքստում,
- պարզաբանել երկու երկրների միջև տնտեսական համագործակցության իրավական հիմքերը և զարգացման արդի միտումները,
- վերլուծել երկու երկրների մակրոտնտեսական զարգացման առանձնահատկությունները և արտաքին առևտրի զարգացման միտումները,
- բացահայտել Հայաստանի արտահանման համեմատական առավելությունները Վրաստանում և առաջարկել կարճաժամկետ հատվածի համար երկրների միջև առևտրային համագործակցության խորացման հենասյուն հանդիսացող ուղղությունները,
- հաշվարկել Հայաստանի և Վրաստանի մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցության գործակիցները փոխադարձ արտահանման և ներմուծման վրա,
- ներկայացնել Հայաստանի և Վրաստանի փոխադարձ ներդրումային համագործակցության ոլորտում առկա խնդիրները և առաջարկել հիմնավոր լուծումներ,

- մշակել և առաջարկել երկու երկրների երկարաժամկետ տնտեսական համագործակցության հեռանկարային ուղղությունները,
- ներկայացնել Հայաստանի և Վրաստանի հետագա հնարավոր համագործակցության սցենարները և ընտրել ամենահավանական և շահավետ սցենարը,
- վերլուծել Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության ընթացակարգերում առկա թերացումները և ներկայացնել դրանց հաղթահարման ուղիները,
- հիմնավորել հայ-վրացական համագործակցության համար կանորություն ներկայացնող ոլորտներում պետական աջակցության անհրաժեշտությունը և մատնանշել դրանց հստակ ուղղությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստան – Վրաստան տնտեսական համագործակցությունն է, իսկ առարկան՝ հայ-վրացական առևտրատնտեսական կապերի զարգացման և կատարելագործման գործընթացները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության շրջանակներում ներկայացված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական մասնագետների հետազոտություններում տնտեսական համագործակցության հիմնադրույթները լուսաբանող գիտական մշակումները, ինչպես նաև ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությանը նվիրված բազմաթիվ հրատարակումները:

Ատենախոսության գործնական նշանակությունը հիմնավորելու նպատակով օգտագործվել են ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկատվության և այլ աղբյուրներում հրապարակված վիճակագրական տվյալները, տեղեկագրերը, փորձագիտական գնահատականները: Հետազոտությունում վերլուծված և ներկայացված բոլոր վիճակագրական տեղեկությունները խմբավորվել և հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունների պաշտոնական նյութերի հիման վրա:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը: Ատենախոսությունում կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Բազմագործոն ռեգրեսիոն մոդելների կիրառման միջոցով բացահայտվել է Հայաստանի և Վրաստանի միջև փոխադարձ արտահանման և ներմուծման աճի վրա երկու երկրների ՀՆԱ-ի աճի փոփոխության ազդեցության գործակիցը և որակական պարամետրերի հիման վրա հիմնավորվել է, որ Վրաստանից Հայաստան արտահանման պարագայում դիտարկվող փոփոխականներն

ազդում են ավելի մեծ չափով, քան Հայաստանից Վրաստան արտահանման դեպքում:

- Մշակվել են հայ-վրացական առևտրատնտեսական համագործակցության կատարելագործման ուղիները և Բելա Բալասսայի՝ բացահայտ համեմատական առավելության /ԲՀԱ/ ինդեքսի կիրառմամբ հաշվարկվել են վրացական շուկայում համեմատական առավելություն ունեցող հայկական ապրանքախմբերը /սուրճ, թեյ, մսից և ձկներից արտադրանք, ծխախոտ, պլաստմասա, ապակի և այլն/:
- Մշակվել են Հայաստանի՝ Վրաստանի միջոցով ԵՄ շուկա դուրս գալու ուղիները /վրացական կապիտալի ներգրավվում և ԵՄ շուկայում համեմատական առավելություն ունեցող հայկական ապրանքների՝ ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և այլն, համատեղ արտադրություն և արտահանում/՝ հիմնվելով երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի զարգացման սցենարային մոտեցումների վերլուծությունների վրա:
- Մշակվել են հայ-վրացական առևտրատնտեսական համագործակցության հետագա զարգացումը խթանելուն միտված առաջարկություններ («Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» միջազգային կոնվենցիայի դրույթների կատարում, մաքսային ընթացակարգերի պարզեցում և այլն):

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ ՀՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներին առնչվող հիմնախնդիրների դիտարկման ժամանակ, ինչպես նաև օգտագործվել արտաքին առևտրային քաղաքականության հայեցակարգային մոտեցումների մշակման գործում: Աշխատանքում իրականացված վերլուծությունները հատկապես կարող են կարևորվել ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կողմից տնտեսական քաղաքականության մշակման համատեքստում: Աշխատանքը հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ վերջինիս արդյունքների հիման վրա ձևավորված առաջարկությունները և նախատեսվող միջոցառումները վերաբերում են Հայաստանի և Վրաստանի տնտեսական համագործակցության ոլորտներին և ուղղված են դրա հետագա զարգացմանն ու կատարելագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Հետազոտության դրույթները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի (ԵԿՏԱ) Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստերում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Պարունակում է 17 աղյուսակ, 7 գծապատկեր

և 5 հավելված: Ատենախոսությունը շարադրված է 154 էջի վրա (առանց հավելվածների):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության նախադրյալները և ժամանակակից առանձնահատկությունները»*** գլխում հեղինակն ուսումնասիրել և ներկայացրել է տարածաշրջանային տնտեսական համագործացության անհրաժեշտությունը միջազգային տնտեսական հարաբերությունների /այսուհետ՝ ՄՏՀ/ համատեքստում, Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության զարգացման նախադրյալները և տնտեսաիրավական հիմքերը, ինչպես նաև հայ-վրացական տնտեսական համագործակցության զարգացման ներկա առանձնահատկությունները:

Հարավային Կովկասում Հայաստանն ու Վրաստանն այն երկրներն են, որոնք պատմա-մշակութային, քաղաքական և տնտեսական գործոններով պայմանավորված մշտապես ունեցել են ընդհանուր համագործակցության եզրեր, իսկ տնտեսական համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը հեղինակը հիմնավորվում է ներքոնշյալ գործոններով.

- Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության և հայ-թուրքական փակ սահմանի առկայության պայմաններում Հարավկովկասյան տարածաշրջանում Վրաստանի դերակատարումը թույլ է տալիս մեր երկրին ծովային ելքն այսօր ապահովել վրացական նավահանգիստների միջոցով:
- Վրաստանն, իր աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ կապող օղակ է Հայաստանի և Ռուսաստանի միջև, միաժամանակ այն մեծ հնարավորություններ է ընձեռում Հայաստանը մյուս երկրների հետ կապելու գործում,
- հայ-վրացական սերտ համագործակցության շնորհիվ հնարավոր է հաղթահարել Հայաստանի փոքր շուկայի սահմանափակ հնարավորությունները,
- հայ-վրացական տնտեսական համագործակցության զարգացմամբ հնարավոր է օտարերկրյա մասնավոր և պետական ներդրումների ներգրավմամբ իրագործել մի շարք միջկառավարական /տրանսպորտի, բնապահպանության և այլ ոլորտներում/ նշանակության ծրագրեր,
- համագործակցության հետագա խորացումը կարող է նպաստել երկու երկրների տնտեսական զարգացման մակարդակների բարձրացմանը,

փոխադարձ առևտրից ակնկալվող օգուտների զգալի մեծացմանը, ինչպես նաև տարածաշրջանում մեր երկրի դերի ու նշանակության ավելացմանը[1]:

Հայ-վրացական տնտեսական հարաբերությունների վերսկսման աշխատանքների հիմնաքարն ի սկզբանե դրվել է իրավական հարթությունում, մասնավորապես, իրականացված հիմնական գործընթացներում հեղինակը առանձնացնում է անկախացումից հետո երկու երկրների միջև կնքված տնտեսական համագործակցության ամենատարբեր ոլորտներին վերաբերող օրենսդրահիրավական հիմք հանդիսացող երկկողմանի միջկառավարական համաձայնագրերը, որոնք միտված են տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում համագործակցության ծավալմանն ու ընդլայնմանը, ինչն էլ պայմանավորել է հետագա ողջ համագործակցությունը: Առևտրատնտեսական բնագավառում գործում են ազատ առևտրի, ներդրումների խրախուսման և փոխադարձաբար պաշտպանության, ֆինանսաարդյունաբերական խմբեր ստեղծելու, մաքսային անցակետեր բացելու, մաքսային գործերում համագործակցության, երկակի հարկերից խուսափելու, ավտոմոբիլային և օդային հաղորդակցության, իրավական օգնության, և տնտեսական կապերի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծող մի շարք այլ համաձայնագրեր[2]: Վերջիններիս հիմնական նպատակներից են առևտրի խոչընդոտների վերացումը, ապրանքների և ծառայությունների միջսահմանային առևտրի դյուրինացումը և գործարարության համար ներդրումների խրախուսումը: Առևտրի այս համաձայնագրերն օգնում են չափել միջազգային գործունեության դաշտը և խրախուսում են կառավարություններին ընդունել որոշումների կայացման բաց և թափանցիկ ընթացակարգեր, ինչպես նաև ընդունել ոչ խտրական օրենքներ և կանոնակարգեր: Դրանք նաև աջակցում են գործարար միջավայրի ուժեղացմանը՝ մաքսատուրքերի դրույքաչափերը նվազեցնելու կամ վերացնելու, մտավոր սեփականության կարգավորման համակարգը հզորացնելու, կառավարությանը գնումներ կատարելու հնարավորություններ ընձեռելու, ներդրումներ կատարելու կանոնները պարզեցնելու և այլնի միջոցով[3]:

Հեղինակը նկատում է, որ չնայած Հայաստանի և Վրաստանի աշխարհագրական դիրքին, մշակութային կապերին, շուկաների նմանությանը և դրանց ընդհանրությանը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների համեմատելիությանը, մեր օրերում, երկու երկրներն էլ իրենց արտաքին տնտեսական քաղաքականությունները մշակելիս տարբեր կողմնորոշվածություն և ուղղություններ են ընտրել: Մասնավորապես, Վրաստանը, ավելի շատ կողմնորոշված լինելով դեպի Արևմուտք և երկրի զարգացումը հիմնականում կապելով արևմտյան աշխարհի՝ ԵՄ հետ և ձգտելով ժամ առաջ հայտնվել վերջինիս կազմում, 2014թ. հունիսի 27-ին

---

[1]Kasimyan M. S. «Perspectives of Armenian-Georgian Economic Cooperation» // «ECONOMICS» Monthly International Reviewed and Refereed Scientific Journal, Georgia, 2013. p. 226.

[2]Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ՝ http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm :

[3]Հայաստան-Վրաստան տնտեսական հարաբերություններ. Չօգտագործված հնարավորություններ // ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Հայաստան, Երևան 2007, էջ 17:

Ասոցացման Համաձայնագրի ստորագրմամբ արդեն իսկ լուրջ հաջողություններ ունի արևմտյան աշխարհի հետ ինտեգրման գործընթացներում: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վերջինս ընտրել է Եվրասիական տնտեսական միությանը /ԵԱՏՄ/ անդամակցելու ուղին՝ միաժամանակ չհրաժարվելով եվրոպական տնտեսական համագործակցության զարգացումից:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Հայ-վրացական տնտեսական համագործակցությունը. ռետրոսպեկտիվ և ներկա իրավիճակի վերլուծություն»*** գլխում հեղինակի կողմից ներկայացվել են անկախացումից հետո Հայաստանում և Վրաստանում տնտեսությունների զարգացման կառուցվածքային տեղաշարժերի առանձնահատկությունները, ուսումնասիրվել են Հայաստանի և Վրաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ երկրի ՀՆԱ-ն և դրա աճի տեմպերը, գյուղատնտեսության և արդյունաբերության աճի տեմպերը, երկրների ֆինանսական կայունությունը, ինչպես նաև արտաքին առևտրաշրջանառության ծավալները, այնուհետև դրանց շարժընթացում լուսաբանվել է իրականացված բարեփոխումների դերն ու նշանակությունը, ինչպես նաև իրականացվել է երկրների տարածաշրջանային տնտեսական համագործակցության վերլուծություն:

Խորհրդային Միության փլուզումից հետո թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը իրականացրել են տնտեսական համակարգերի խոշոր կառուցվածքային փոփոխություններ՝ կապված գյուղատնտեսության ոլորտում հողերի և արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացման, հարկային ու մաքսային բարեփոխումների, արտաքին առևտրի ազատականցման, միջազգային կազմակերպություններին անդամակցության հետ և այլն: Արդյունքում, չնայած գնաճի, արտադրության անկման և գործազրկության բարձր մակարդակների, երկրները կարողացել են հաղթահարել դժվարությունները և ունենալ մակրոտնտեսական հաջողություններ: Եվ այսօր՝ համաշխարհային տնտեսության գլոբալացման ներկա պայմաններում, այս երկու ազգային տնտեսությունների համար էլ կարևոր նախապայման է այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք թույլ կտան դիմակայել համաշխարհային տնտեսության հետզհետե աճող սուր մրցակցությանը, ինչպես նաև ինտեգրվել աշխարհում ընթացող վերազգայնացման գործընթացներին: Այս տեսանկյունից Հայաստանի և Վրաստանի համար խիստ արդիական և հրատապ հիմնախնդիր է հատկապես տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին մասնակցությունը: Այս առումով էլ, ներկայացվել և վերլուծվել են երկու երկրների միջև տնտեսական համագործակցության հիմնական բնագավառները և դրանց զարգացման ներկա միտումները:

Ատենախոսության մեջ հեղինակի կողմից կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին տարիների ընթացքում Հայաստան-Վրաստան փոխադարձ առևտրաշրջանառությունը աճի բարձր ցուցանիշներ է գրանցում և թույլ է տալիս նախանշել համագործակցության հետագա զարգացման հեռանկարային տարբերակները /տե՛ս աղյուսակ 1/:

Ատենախսության մեջ հեղինակը հանգամանորեն վերլուծում է 2007-2014 թթ. դեպի Վրաստան արտահանման շարժընթացը, և նշում, որ այն, ունենալով

տատանողական բնույթ, այնուամենայնիվ, վերջին հաշվով, դրսևորել է նվազման միտում՝ կրճատվելով 1,04 անգամ՝ արտահանման ծավալների ամենաբարձր ցուցանիշը գրանցելով 2007 թ.: 2008 թ.-ից սկսած արդեն նկատվում է արտահանման ծավալների աստիճանական կրճատում մինչև 2010 թ.՝ 2007 թ. համեմատությամբ կրճատվելով մոտ 1.7 անգամ:

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտուրը Վրաստանի հետ 2007-2014թթ. /հազ. ԱՄՆ դոլար/[4]

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
ՀՀ ընդհանուր արտահանումը	1152,3	1057,1	710,1	1041,0	1334,3	1380,2	1478,7	1519,3
ՀՀ արտահանումը Վրաստան	87,9	81,8	52,8	49,0	61,8	70,8	85,2	84,011
ՀՀ ընդհանուր ներմուծումը	3267,8	4426,1	3321,1	3748,9	4145,3	4261,2	4385,9	4401,6
ՀՀ ներմուծումը Վրաստանից	46,3	49,4	40,9	54,3	60,2	48,9	65,8	71,9
Վրաստանի հետ արտաքին ապրանքաշրջանառությունը	134,2	131,1	93,7	103,4	122,0	119,7	151,0	155,91
Առևտրային հաշվեկշիռը Վրաստանի հետ	41,5	32,4	11,9	-5,3	1,7	21,9	19,4	12,111

Հեղինակը նկատում է նաև, որ 2007-2014 թթ. ընթացքում ՀՀ արտահանման մեջ Վրաստանի տեսակարար կշիռը տատանվել է 4,6% /2011 թ./ մինչև 7.7% /2008 թ./ սահմաններում: Ներմուծման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2014 թ. կազմելով 71.9 մլն ԱՄՆ դոլար: Ի դեպ, Վրաստանի տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ այդ թվականին կազմել է 1.63%: Ընդհանուր առմամբ, Վրաստանից ներմուծման ծավալները տարեցտարի գրանցել են կայուն աճի միտումներ՝ քննարկվող ժամանակահատվածում աճելով գրեթե 1,7 անգամ: Բացառություն են կազմում 2009 թ. և 2012 թ. երբ ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են համապատասխանաբար 17,2% և 18,74%-ով /տե՛ս աղյուսակ 1/:

Ուսումնասիրելով 2007-2014 թթ. Վրաստանի արտաքին առևտրային կապերի միտումները, հեղինակը բացահայտում է, որ այդ ընթացքում Վրաստանի արտահանման մեջ Հայաստանի տեսակարար կշիռը տատանվել է 7.8% /2009 թ./ մինչև 10.98% /2012 թ./ սահմաններում: Վրաստանից Հայաստան արտահանման ծավալները, բացառությամբ 2009 թ. և 2014 թ., այս ընթացքում դրսևորել են կայուն աճի միտումներ: Արտահանման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2013 թ., երբ կազմել է 315.4 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 1.22 անգամ /տե՛ս աղյուսակ 2/:

Ընդհանուր առմամբ, ատենախոսն ընդգծում է, որ ՀՀ-ից ներմուծման ծավալները դրսևորում են աճի միտումներ, բացառությամբ 2009 թ. երբ, պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամի օբյեկտիվ պատճառներով, ներմուծման ծավալները էականորեն կրճատվել են՝ կազմելով 40.9 մլն. ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ, չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածում, ՀՀ-ից

[4]Աղյուսակը կազմվել է և հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014 թ. հրապարակումների տվյալները:

ներմուծման ծավալներն աճել են մոտ 1.5 անգամ, Վրաստանի ընդհանուր ներմուծման մեջ Հայաստանի բաժնեմասը մշտապես շատ փոքր է եղել:

Աղյուսակ 2

Վրաստանի արտաքին առևտուրը ՀՀ հետ 2007-2014թթ. /մլն. ԱՄՆ դոլար/[5]

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
ՎՀ ընդհանուր արտահանումը	1152,3	1057,1	710,1	1041,0	1334,3	1380,2	1478,7	1519,3
ՎՀ արտահանումը Հայաստան	87,9	81,8	52,8	49,0	61,8	70,8	85,2	84,011
ՎՀ ընդհանուր ներմուծումը	3267,8	4426,1	3321,1	3748,9	4145,3	4261,2	4385,9	4401,6
ՎՀ ներմուծումը Հայաստանից	46,3	49,4	40,9	54,3	60,2	48,9	65,8	71,9
ՀՀ հետ արտաքին ապրանքաշրջանառությունը	134,2	131,1	93,7	103,4	122,0	119,7	151,0	155,91
Առևտրային հաշվեկշիռը Հայաստանի հետ	41,5	32,4	11,9	-5,3	1,7	21,9	19,4	12,111

Հեղինակն, անդրադառնալով երկրների միջև ներդրումային համագործակցությանը, բացահայտել է, որ այս ոլորտում չեն արձանագրվում այն հաջողությունները, որոնց երկրները հասել են առևտրատնտեսական ոլորտում:

Աղյուսակ 3

ՀՀ և ՎՀ օտարերկյա ներդրումները /մլն ԱՄՆ դոլար/[6]

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*
ՀՀ-ում կատարված ներդրումներ	1546,6	2132,2	2710,3	2073,3	3175,0	3853,4	3698,2
Վրաստանի կողմից կատարված ներդրումներ	4,5	24,8	8,4	-	-	-	-
ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-եր	675,3	1118,4	828,7	535,7	703,2	598,4	304,4
Վրաստանի կողմից կատարված ՕՈՒՆ-եր	-	-	0,008	-	-	-	-
Վրաստանում կատարված ՕՈՒՆ-եր	2014,8	1563,9	658,4	814,4	1117,2	911,6	941,9
Հայաստանի կողմից կատարված ՕՈՒՆ-եր	-4,8	-15	-5,3	-16,5	-12,3	5,9	3,7

Ներդրումային համագործակցությունը երկու երկրների միջև ներկայումս գտնվում է բավականին թույլ հիմքերի վրա: Եթե 2007 թ. վրացական ներդրումները կազմել են 4,5 մլն ԱՄՆ դոլար, 2008 թ.-ին՝ 24,8 մլն ԱՄՆ դոլար, 2009 թ.՝ 8,4 մլն ԱՄՆ դոլար, ապա 2010, 2011, 2012 և 2013 թթ. դրանք իսպառ բացակայել են, իսկ Վրաստանում իրականացվող հայկական ներդրումների դրական ցուցանիշ նկատվում

---

[5] Աղյուսակը կազմվել է և հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի տվյալները: Աղբյուրը՝ http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=137&lang=eng :

[6] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով «ՀՀ Վիճակագրական տարեգիրք» 2011 /էջ 502, 508, 510/, 2013 /էջ 505, 511, 513./ վիճակագրական ժողովածուների տվյալները և Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի տվյալները: Աղբյուրը՝ http://geostat.ge/index.php?action=page&p_id=140&lang=eng :

է միայն 2012 և 2013 թ., երբ հայկական ներդրումները կազմել են համապատասխանաբար 5,9 և 3,7 մլն ԱՄՆ դոլար /տե՛ս աղյուսակ 3/:

Ամփոփելով, ատենախոսն ընդգծում է, որ արտաքին առևտրատնտեսական, ինչպես նաև ներդրումային համագործակցությունը տնտեսական կապերի լուրջ բնագավառներ են, որոնց հետագա զարգացումն էլ հիմք կհանդիսանա երկու երկրների միջև տնտեսական համագործակցության այլ ոլորտների առաջացման և զարգացման համար:

Ատենախոսության երրորդ՝ ***«Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության զարգացման հիմնական ուղիները»*** գլխում հեղինակը առևտրատնտեսական համագործակցությունը ներկայացրել է որպես երկու երկրների տնտեսական համագործակցության գերակա ուղի, տվել է հայ-վրացական առևտրատնտեսական կապերի էկոնոմետրիկ գնահատականը, ինչպես նաև քննարկել և հիմնավորել է ՀՀ պետական տնտեսական աջակցության անհրաժեշտությունը Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության համատեքստում:

Ելնելով ատենախոսության նպատակից և դրված խնդիրներից՝ 2002-2014 թթ. Հայաստանի և Վրաստանի մակրոտնտեսական համապատասխան ցուցանիշների եռամսյակային տվյալների կիրառմամբ հեղինակի կողմից էկոնոմետրիկ մոդելների կառուցման միջոցով փորձ է կատարվել բացահայտել դեպի Վրաստան ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների վրա ազդող հիմնական գործոնները և տալ այդ փոխկապվածությունների տնտեսաչափական գնահատականը:

Հիմնվելով էկոնոմետրիկ մոդելի արդյունքների վրա, ատենախոսը եզրահանգում է, որ տվյալ ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի աճի փոփոխությունը 100 միավորով նույն ժամանակահատվածում հանգեցնում է Հայաստանից Վրաստան արտահանման աճի փոփոխության 4 միավորով, իսկ ՀՀ ընդհանուր արտահանման աճի փոփոխությունը 100 միավորով՝ Հայաստանից Վրաստան արտահանման աճի փոփոխության՝ 2.3 միավորով: Միևնույն ժամանակահատվածում Վրաստանի ՀՆԱ-ի աճի փոփոխությունը 100 միավորով հանգեցնում է Վրաստանից Հայաստան ներմուծման աճի փոփոխությանը 2 միավորով, իսկ ՀՀ ընդհանուր ներմուծման աճի փոփոխությունը 100 միավորով՝ Վրաստանից Հայաստան ներմուծման աճի փոփոխության 8 միավորով: Այսպիսով, ատենախոսը եզրահանգում է, որ Վրաստանից Հայաստան ներմուծման ծավալների վրա ընտրված մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունն ավելի նշանակալի է, քան Հայաստանից Վրաստան արտահանման ծավալների վրա, քանի որ երբ ՀՀ ՀՆԱ-ի աճն ավելանում է 100 միավորով, ապա դրանից 4 միավորը սպառում է գտնում Վրաստանի շուկայում, իսկ երբ Վրաստանի ՀՆԱ-ի աճն ավելանում է 100 միավորով, դրանից 2 միավորն է սպառում գտնում ՀՀ շուկայում:

Հետագայում ուսումնասիրված փոխկապվածություններն ավելի մեծացնելու և երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերն էլ ավելի զարգացնելու նպատակով հունգարացի տնտեսագետ Բելա Բալասսայի կողմից առաջարկված

բացահայտված համեմատական առավելության ինդեքսի[7] կիրառմամբ բացահայտվել են այն ապրանքախմբերը, որոնց գծով Հայաստանն ունի համեմատական առավելություն Վրաստանի համեմատ, որոնք էլ հեղինակի կողմից առանձնացվել են որպես Հայաստանի և Վրաստանի միջև առևտրի հետագա զարգացման ուղղություններից մեկը:

Միևնույն ժամանակ հեղինակը նկատում է, որ Հայաստանի և Վրաստանի ներքին շուկաների չափերը մեծ չեն՝ որպես արտահանման թիրախային շուկաներ ընտրելու համար: Բացի այդ, տարբեր ինտեգրացիոն միավորումներին Հայաստանի ու Վրաստանի անդամակցությունը ապագայում կարող է խոչընդոտել երկու երկրների տնտեսական համագործակցությանը: Այդ իսկ պատճառով ատենախոսը կարևորում է ապագայում հնարավոր խոչընդոտներից խուսափելու ուղիների որոնումն արդեն իսկ այսօր և ընդգծում է, որ երկու երկրների տնտեսական համագործակցությունը առավելապես կարևոր կարող է լինել միմյանց միջոցով արտաքին այլ շուկաներ դուրս գալու տեսանկյունից: Ելնելով դրված նպատակից, հեղինակն իրականացրել է Հայաստանի և Վրաստանի հետագա տնտեսական համագործակցության հնարավոր սցենարային վերլուծություն տարբեր ինտեգրացիոն միավորումներին անդամակցության համատեքստում, և, հաշվի առնելով համաշխարհային տնտեսության զարգացման արդի միտումները, երկու երկրների արտաքին տնտեսական քաղաքականությունների զարգացումները, փոխադարձ առևտրի կառուցվածքը, արտահանման ու ներմուծման ապրանքային կազմը, արտաքին առևտրի ծավալների աճն ու զարգացման տեմպերը, ինչպես նաև ավելի արդյունավետ տնտեսական համագործակցության և զարգացման համար առկա հնարավորությունները և ակնկալվող դրական արդյունքները, բացահայտել է այդ հնարավոր սցենարներից ամենահավանականն ու իրատեսականը: Այն է՝ Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցությունը՝ երկու տարբեր՝ ԵՄ և ԵԱՏՄ, ինտեգրացիոն միավորումների հանգույցի համատեքստում: Այդ համատեքստում, կրկին օգտագործելով Բելա Բալասսայի կողմից մշակված բացահայտ համեմատական առավելության ինդեքսը, ատենախոսը ներկայացնում է այն ապրանքախմբերը, որոնց արտահանման տեսանկյունից ՀՀ-ն ունի համեմատական առավելություն այժմ արդեն ԵՄ շուկայում:

Հեղինակը կարևորելով նաև երկրների առևտրատնտեսական հարաբերություններում առկա մաքսային ձևակերպումների ընթացակարգային խնդիրների լուծման անհրաժեշտությունը, բացահայտում է ոլորտում առկա մի շարք խնդիրներ՝ կապված ապրանքների հայաստանյան ծագումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման, ենթակառուցվածքային սահմանափակ

---

[7]Համաձայն Բալասսայի մեթոդաբանության՝ ԲՀԱi=(xi:X)/(xit:Xt), որտեղ՝ xi-ն տվյալ երկրում i-րդ ապրանքի արտահանումն է, X-ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը, xit-ն՝ i-րդ ապրանքի արտահանումը Հայաստանից և Վրաստանից միասին վերցրած, իսկ Xt-ն ընդհանուր Հայաստանի և Վրաստանի արտահանումը: Ընդ որում՝կասենք, որ Հայաստանն ունի i-րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե ԲՀԱi>1: (աղբյուրը՝ Balassa, B., Trade Liberalisation and Revealed Comparative Advantage // The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123):

հնարավորությունների հետ և այլն: Ուստի, ապրանքային, տրանսպորտային և զբոսաշրջային հոսքերի ինտենսիվացման և առավել արդյունավետ մաքսային հսկողության իրականացման համար, ինչպես նաև լրացուցիչ խոչընդոտների վերացման նպատակով հեղինակն առաջարկում է հայ-վրացական սահմանը սպասարկող մաքսային մարմիններում իրականացնել շարունակական բարեփոխումներ, ինչը ոչ միայն պետք է լինի մաքսային մարմինների, այլև սահմանային բոլոր գերատեսչությունների հոգածության առաջնային նշանակության խնդիրներից մեկը: Ի թիվս մաքսային ընթացակարգերի պարզեցման բարեփոխումների, ատենախոսության մեջ առաջարկվում է նաև սահմանային անցակետերում ենթակառուցվածքների, կառուցվածքային բարեփոխումների և օրենսդրական, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդաշնակեցման և ինտեգրման ուղղությամբ ձեռնարկել միջոցառումներ ուղղված ընթացակարգերի պարզեցմանը, դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, պահանջվող փաստաթղթերի կրճատմանը, սպասարկման մակարդակի բարձրացմանը, առաջավոր մաքսային փորձի ներդրմանը և, վերջին հաշվով, առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրակացություններ, որոնք ամփոփված են ատենախոսության ***եզրակացություններ և առաջարկություններ*** բաժնում, որոնք ամփոփ հանգել են հետևյալին.

1. Անկախացումից հետո Հայաստանը և Վրաստանը ազատ առևտրի, միասնական տնտեսական տարածքի ստեղծման, ինչպես նաև միջկառավարական համաձայնագրերի կնքման միջոցով ապահովել են բոլոր անհրաժեշտ հիմքերը երկու երկրների միջև տնտեսական համագործակցության խորացման և ընդլայնման համար: Այդուհանդերձ, երկու երկրների միջև հիմնարար փաստաթուղթ կարելի է համարել 2001թ. հոկտեմբերին ստորագրված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը: Բազմաթիվ պայմանագրեր, սակայն, դեռևս մնում են թղթի վրա, չնայած այն հանգամանքին, որ դրանց գործնական կիրառությունը զգալի տնտեսական օգուտներ կարող է ապահովել ՀՀ տնտեսության համար: Այս տեսանկյունից ատենախոսն անհրաժեշտ է համարում գործող համաձայնագրերի դրույթների կատարումն ապահովող քաղաքականության մշակումը: Հեղինակն հատկապես առանձնացնում է «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» միջազգային կոնվենցիայի դրույթների կատարման հրատապությունը, ինչը թույլ կտա որոշակիորեն բարձրացնել Վրաստանի տարածքով անցնող և այլ երկրների ներքին շուկաների համար նախատեսված ապրանքների մրցունակությունը: Ներկայումս Վրաստանի տարածքով անցնող հայկական բեռների նկատմամբ կիրառվում է 30% տարանցման մաքսադրույք, ուստի նշյալ միջազգային համաձայնագրի դրույթների կատարումը կարող է կրճատել ՀՀ-ից արտահանվող ապրանքների տեղափոխման ծախսը: Ընդ որում, այս և այլ պայմանագրերի և միջազգային համաձայնագրերի դրույթների կատարումն

ապահովող երկու տարբերակ կա՝ միջազգային արբիտրաժ և փոխադարձ շահերի վրա հիմնված բանակցությունների վարում: Ատենախոսությունում հիմնավորված է, որ թերևս երկրորդ տարբերակն առավել շահավետ կարող է լինել և՝ տնողության, և՝ երկու երկրների միջև առկա կապերը բարիդրացիական եղանակով զարգացնելու տեսանկյունից: Այս խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է Հայաստանի և Վրաստանի միջև գործող տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեության դաշտի ընդլայնում՝ ատենախոսությունում հանգամանորեն մշակված քայլերի հաջորդականության միջոցով, ինչն ուղղված կլինի միջտարածաշրջանային համագործակցության հեռանկարային ուղղությունների զարգացմանը և տնտեսական համագործակցության հիմքերի ամրապնդմանը:

2. Վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ երկու երկրների տնտեսական համագործակցության զգալի խոչընդոտներ են առկա նաև առևտրային և տրանսպորտային գործընթացները սպասարկող ընթացակարգերում և մաքսային անցակետերում: Ուստի, ապրանքային, տրանսպորտային և զբոսաշրջային հոսքերի ինտենսիվացման և առավել արդյունավետ մաքսային հսկողության իրականացման համար, ինչպես նաև լրացուցիչ խոչընդոտների վերացման նպատակով ատենախոսության մեջ առաջարկում է ընթացակարգերի բարելավման տեսանկյունից իրականացնել մի շարք բարեփոխումներ՝ մասնավորապես, մաքսային ընթացակարգերի պարզեցման, դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, պահանջվող փաստաթղթերի կրճատման, սպասարկման մակարդակի բարձրացման, սահմանային անցակետերում ենթակառուցվածքների, կառուցվածքային բարեփոխումների և օրենսդրական, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդաշնակեցման միջոցով:

3. Ատենախոսությունում կատարված Հայաստան-Վրաստան արտաքին ապրանքաշրջանառության էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում պարզվել է, որ տվյալ ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի աճի փոփոխությունը 100 միավորով նույն ժամանակահատվածում կհանգեցնի Հայաստանից Վրաստան արտահանման աճի փոփոխության 4 միավորով, իսկ ՀՀ ընդհանուր արտահանման աճի փոփոխությունը 100 միավորով կհանգեցնի Հայաստանից Վրաստան արտահանման աճի փոփոխության 2.3 միավորով: Միևնույն ժամանակ, Վրաստանի ՀՆԱ-ի աճի փոփոխությունը 100 միավորով հանգեցնում է Վրաստանից Հայաստան ներմուծման աճի փոփոխությանը 2 միավորով, իսկ ՀՀ ընդհանուր ներմուծման աճի փոփոխությունը 100 միավորով կհանգեցնի Վրաստանից Հայաստան ներմուծման աճի փոփոխության 8 միավորով: Այլ կերպ ասած՝ երբ ՀՀ ՀՆԱ-ի աճն ավելանում է 100 միավորով, ապա դրանից 4 միավորը սպառում է գտնում Վրաստանի շուկայում, իսկ երբ Վրաստանի ՀՆԱ-ի աճն ավելանում է 100 միավորով, դրանից 2 միավորն է սպառում գտնում ՀՀ շուկայում: Այս ցուցանիշը հետագայում էլ ավելի մեծացնելու նպատակով առաջարկվել է պետական լծակների կիրառմամբ աջակցել այն

ապրանքախմբերի արտադրությանը, որոնց արտահանման գծով ՀՀ-ն ունի համեմատական առավելություններ Վրաստանում::

4. Բելա Բալասսայի կողմից առաջադրված մեթոդաբանության միջոցով ատենախոսության մեջ հիմնավորվում է այն փաստը, որ «Կենդանի կենդանիներ», «Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների նբույսերիմասերի վերամշակումից մթերք», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Պլաստմասսա և դրանից իրեր», «Ապակի և դրանից իրեր», «Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք, ալյուրից հրուշակեղեն», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Դեղագործական մթերք», «Պարարտանյութեր», «Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և քսուկներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ», «Սպիտակուցային նյութեր, սոսինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ» ապրանքախմբերի արտահանման գծով Հայաստանն ունի բացահայտ համեմատական առավելություն Վրաստանի նկատմամբ, ուստի դրանք այն ապրանքախմբերն են, որոնց հիման վրա էլ հետագայում պետք է խորացվեն երկու երկրների տնտեսական հարաբերությունները:

5. Անդրադառնալով երկրների ներդրումային համագործակցությանը՝ կարևորվում է այն իրողությունը, որ վերջին 10 տարիներին երկրների կողմից կատարված փոխադարձ ներդրումները շատ աննշան են՝ հաճախ դրսևորելով անգամ զրոյական ցուցանիշներ: Օտարերկրյա ուղղակի ներդրումների առումով երկու երկրներն ունեն թույլ զարգացած կապեր, ինչը նշանակում է, որ մեր երկրում առկա գիտատեխնիկական ներուժը և համեմատաբար էժան աշխատուժի առկայությունը—դեռևս բավարար չեն վրացական կապիտալի ներգրավման համար, ինչը այս ուղղությամբ իրականացվող քաղաքականության մեջ պետական տնտեսական լծակների կիրարկման շրջանակների ընդլայնման անհրաժեշտություն է առաջացնում: Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրահանգել, որ ներդրումների ներգրավման և վրացական մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների գործունեության ակտիվացման և գործակցության շրջանակների ընդլայնման, ինչպես նաև ներդրումային մեծ հոսքեր ապահովելու տեսանկյունից հսկայական դեր կարող է խաղալ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են ներդրումային երաշխիքների տրամադրումը, հարկային արտոնությունների կիրառումը, ձեռնարկությունների բիզնես ծրագրերի կատարելագործումը և այլն:

6. Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հայ-վրացական տնտեսական հարաբերությունները հիմնականում

սահմանափակվում են առևտրատնտեսական համագործակցությամբ՝ չնչին մաս հատկացնելով ներդրումներին: Այս համատեքստում ատենախոսությունում առաջարկվում է երկրների միջև տնտեսական համագործակցություն՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում: Կարճաժամկետ հատվածում հնարավոր չէ զգալի կառուցվածքային տեղաշարժեր իրականացնել, այդ պատճառով կարճաժամկետ հատվածի համար հիմնավորվում և առաջարկվում է մասնագիտացում Վրաստանի համեմատ ՀՀ արտահանման համեմատական առավելություն ունեցող ոլորտներում և այդ ուղղությամբ առևտրային հարաբերությունների խորացում: Հասկանալի է, սակայն, որ երկարաժամկետ հատվածի համար երկու երկրների շուկաները չեն կարող լինել փոխադարձ արտահանման ընդլայնման համար թիրախային շուկաներ իրենց փոքր տարողունակության պատճառով, այդ տեսանկյունից երկարաժամկետ հատվածի համար ատենախոսն առաջարկում և հիմնավորում է ի լրումն առևտրային կապերի նաև փոխադարձ ներդրումային քաղաքականության իրականացման միջոցով համագործակցության էլ ավելի խորացում, որը հնարավորություն կտա Հայաստանին Վրաստանի միջոցով ավելի շահեկան պայմաններով դուրս գալու ԵՄ շուկա, իսկ Վրաստանին՝ Հայաստանի միջոցով՝ ԵԱՏՄ շուկա՝ հիմք ընդունելով Բելա Բալասսայի կողմից առաջադրված մեթոդաբանության միջոցով բացահայտված ՀՀ-ում Վրաստանի համար ներդրումային հետաքրքրություն և շահավետություն ունեցող 5 ոլորտները՝ «Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից» և «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից»: Ատենախոսն եզրահանգում է, որ այս ոլորտները կարող են հանդիսանալ վրացական ներդրումների համար թիրախային ուղղություններ, քանի որ նույն ոլորտում Վրաստանում կատարված ներդրումը թույլ չի տա վրացի գործարարներին օգտվել ԵՄ շուկայում համեմատական առավելություն ունենալու հնարավորությունից: Սա Հայաստանին ելքի հնարավորություն կտա դեպի ԵՄ շուկա, իսկ վրացի գործարարներին հնարավորություն կտա շահույթ ստանալ ԵՄ շուկայում իրացնելով ՀՀ ունեցած համեմատական առավելությունները:

7. Հայաստան-Վրաստան համագործակցության խորացումը դիտարկելով՝ որպես ԵՄ և ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորումների հանգույց՝ ներկայացվել են այս համատեքստում անհրաժեշտ տնտեսական քայլերը և դրանց շահավետությունը Հայաստանի և Վրաստանի համար: Մասնավորապես, մշակվել են երկու երկրների հետագա համագործակցության հնարավոր սցենարներ՝ ներկայացնելով և հիմնավորելով դրանցից յուրաքանչյուրի իրագործման հավանականությունը՝ ելնելով ՀՀ աշխարհա-քաղաքական վիճակից, և ՀՀ-ի համար շահավետությունը՝ ելնելով ՀՀ տնտեսական շահից, որի արդյունքում

առաջարկվել է իրագործել ամենագործուն սցենարը՝ ատենախոսությունում մշակված միջոցառումների հաջորդականությամբ, որը կապահովի արտաքին ապրանքաշրջանառության ծավալների ավելացում, արտաքին առևտրային քաղաքականության ազատականացում, օտարերկրյա ներդրումների ներհոսք երկու երկրներ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Կասիմյան Մ. Ս., «Արտաքին առևտրի զարգացման տեսական դրույթների էվոլյուցիան» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, № 6 (144), Երևան, 2012թ., էջ 25-27:
2. Կասիմյան Մ. Ս., «Տարածաշրջանային ինտեգրման էությունը և զարգացման փուլերը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, № 6 (144), Երևան, 2012թ., էջ 28-31:
3. Կասիմյան Մ. Ս., «Արտաքին տնտեսական կապերի զարգացման արդի միտումները» // Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, №2 (01), Երևան, 2013թ., էջ 188-201:
4. Կասիմյան Մ. Ս., «Հայ-վրացական առևտրատնտեսական կապերի ընդհանուր բնութագիրը» // Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 233-248:
5. Կասիմյան Մ. Ս., «Հայ-վրացական առևտրատնտեսական համագործակցության տնտեսաչափական գնահատականը» // Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, №6, Երևան, 2015, էջ 238-245:
6. Kasimyan M. S. «Perspectives of Armenian-Georgian Economic Cooperation» // «ECONOMICS» Monthly International reviewed and refereed scientific journal, №5-6 Georgia, 2013, p. 224-237:

КАСИМЯН МАРГАРИТ СУРЕНОВНА

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АРМЯНО-ГРУЗИНСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 26-ого апреля 2016 г., в $15^{\underline{30}}$ на заседании Специализированного совета по экономике 008 ВАК РА при Российско-Армянском (Славянском) университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Объективные закономерности развития мирового хозяйства доказывают, что дальнейшее развитие и экономический рост во всех странах мира, в основном, обусловлены тем, насколько сильно они вовлечены в мировые интеграционные и глобализационные процессы. Страны, имеющие малую экономику и ограниченные ресурсы, не могут обеспечить стабильное развитие исключительно за счет удовлетворения внутреннего спроса, так как внутренний рынок ограничен и не дает возможности долгосрочного роста. Взамен, внешний рынок и удовлетворение на нем спроса могут стать залогом продолжительного устойчивого экономического роста для этих стран. Следовательно, в этом контексте Республика Армения также не является исключением, и ее дальнейшее развитие и экономический рост так же обусловлены ее участием в региональных интеграционных процессах и углублением экономического сотрудничества с соседними странами.

Объектом исследования является экономическое сотрудничество между Арменией и Грузией. Предметом исследования являются процессы развития и совершенствования армяно-грузинских торгово-экономических отношений.

Основной целью исследования являются анализ и оценка торгово-экономических отношений Армении и Грузии, а также обоснование перспектив взаимовыгодного экономического сотрудничества между двумя странами.

В соответствии с вышеуказанной целью в работе были поставлены и решены следующие задачи:

- Обосновать необходимость экономического сотрудничества между Арменией и Грузией в контексте современных тенденций международной интеграции;
- Представить правовые основы и современные тенденции развития экономического сотрудничества двух стран;
- Проанализировать особенности макроэкономического развития и тенденции развития внешней торговли обеих стран;
- Выявить сравнительные преимущества экспорта Армении в Грузию и предложить основные направления углубления двустороннего торгового сотрудничества в

краткосрочной перспективе;

- Рассчитать коэффициенты влияния макроэкономических показателей Армении и Грузии на взаимный импорт и экспорт;
- Выявить основные проблемы в сфере армяно-грузинского инвестиционного сотрудничества и разработать подходы к их регулированию;
- Разработать и предложить перспективные направления долгосрочного экономического сотрудничества двух стран;
- Предложить сценарии возможного дальнейшего экономического сотрудничества между Арменией и Грузией и выбрать наиболее выгодный и вероятный среди них вариант;
- Проанализировать имеющиеся недостатки в процедурах экономического сотрудничества между Арменией и Грузией и представить пути их преодоления;
- Обосновать необходимость государственной поддержки в сферах, представляющих наибольшую значимость для армяно-грузинского сотрудничества и определить ее направления.

В результате проведенного исследования и анализа был получен ряд результатов теоретического, методического и прикладного значения, из которых основными положениями, отражающими научную новизну диссертации, являются следующие:

1. Путем применения многофакторных регрессионных моделей был выявлен коэффициент воздействия изменения роста ВНП двух стран на взаимный экспорт и импорт между Арменией и Грузией, и на основании качественных параметров было обосновано, что при экспорте из Грузии в Армению рассматриваемые переменные воздействуют в большей мере, чем в случае экспорта из Армении в Грузию.
2. Разработаны пути усовершенствования торгово-экономического армяно-грузинского сотрудничества и с помощью применения индекса выявленного сравнительного преимущества (ВСП) Бела Балассы были выявлены те товарные группы экспорта Армении, которые имеют сравнительные преимущества на грузинском рынке (кофе, чай, мясная и рыбная продукция, табак, пластмасса, стекло и т.д.).
3. Были разработаны пути выхода Армении на рынок ЕС через Грузию (привлечение грузинского капитала и совместное производство и экспорт армянских товаров, имеющих сравнительное преимущество на рынке ЕС – алкогольные и безалкогольные напитки, драгоценные и полудрагоценные камни и т.д.) на основании анализа сценарных подходов развития торгово-экономических связей двух стран.
4. Разработаны предложения по стимулированию развития армяно-грузинского торгово-экономического сотрудничества в перспективе (выполнение положений международной конвенции «О транзитной торговле стран, не имеющих выхода к морю», упрощение таможенных процедур и прочее).

MARGARIT SUREN KASIMYAN

PERSPECTIVES OF ARMENIAN-GEORGIAN ECONOMIC COOPERATION

The abstract of the thesis for the receiving of the degree of Doctor of Economics in the speciality of 08.00.06 - «International Economics».

The defense of the thesis will take place on April 26th at $15^{\underline{30}}$ o'clock, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian (Slavonic) University: 123 H. Emin str., Yerevan 0051.

ABSTRACT

World economic development objective regularities prove that world's further development and economic growth are largely conditioned by world integration and globalization processes. Countries with small economy and limited resources can not provide stable development only at the expense of satisfaction of internal market as the internal market is limited and does not enable them to have long-lasting growth. Instead, the foreign market and satisfaction of its demand can become guarantee of continuous stable growth of those countries. Therefore, Republic of Armenia is not an exception too. So, we believe that its effective involvement in regional integration processes and insentive cooperation with the neighboring countries will mostly ensure country's further economic growth and development.

The main aim of the thesis is: to analyze and estimate the trade-economic relations of Armenia and Georgia and to substantiate the prospects of the mutually beneficial economic cooperation between the two countries.

In accordance with the aim, the following objectives have been identified and proposed in the present study:

- to substantiate the necessity of the Armenian-Georgian economic cooperation in the context of the contemporary trends of global integration,
- to present the legal bases and the contemporary trends of economic cooperation development between the two countries,
- to analyze the peculiarities of the macro-economic development and the tendencies of the external trade of these two countries,
- to expose the comparative advantages of Armenia's export to Georgia and to suggest the main directions of deepening the bilateral trade cooperation for the short-term period,
- to calculate the coefficients of impact of macro-economic indices of Georgia and Armenia on the bilateral export and import,
- to present the problems faced by Armenia and Georgia in the sphere of bilateral investment cooperation and to propose substantiated solutions,
- to elaborate and suggest the prospective directions of long-term economic cooperation of

the two countries,

- to reveal the possible scenarios of Armenian-Georgian further cooperation and to identify the most preferential and advantageous scenario.
- To analyze the imperfections of procedures available in the field of cooperation between Armenia and Georgia and to present the ways for their overcoming.
- To ground the necessity of state support in the areas of interest for Armenian-Georgian cooperation and to specify its definite directions.

In the result of the research and analysis conducted in the thesis, a number of theoretical, methodical and practical results have been obtained, where the following clauses reflect the scientific novelty:

1. By application of multi-factor regressive models the two countries' GNP growth change action coefficient on the mutual export and import between Armenia and Georgia has been specified and the quality parameters have been used to ground that the variables under consideration mostly influence during the export from Georgia to Armenia than in case of export from Armenia to Georgia.
2. Ways of improvement of trade-economic Armenian-Georgian cooperation have been developed and by application of the Bela Balassa's index of revealed comparative advantage (RCA) the groups of Armenian goods which have comparative advantage in the Georgian market (coffee, tea, meat and fish production, tobacco, plastic, glass etc.) have been revealed.
3. Armenia's ways of entering to the EU market through Georgia have been developed (attraction of Georgian capital and joint production of Armenian goods which have comparative advantage in the EU market – alcoholic and non-alcoholic beverages, precious and semi-precious stones, etc.) on the base of analysis of scenario approaches to the development of trade-economic ties between two countries.
4. Proposals developed to stimulate the Armenian-Georgian trade-economic cooperation in prospect (implementation of the «Transit Trade of Land – locked Countries» international Convention, simplification of customs procedures, etc.).